ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ



ՀՀ ՅՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

REL-T
ANON
9999

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՀՐԱՄԱՆԱՒ
ՏԵՐ ՎՐԹԱՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՀՀ ՋՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՎԱԾ ՀՀ ԶՈՒ ՀՈԳԵՎՈՐ ՍՊԱՍԱՎՈՐՆԵՐԻՆ



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն
Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց

Մենք փառք ենք տալիս Աստծուն, որ դեռևս 1997թ. ստեղծված բանակի հոգևոր սպասավորությունը տարիների ընթացքում ավելի զորացավ և բարձրացավ հոգևոր առաջնորդության հանգամանքի: Այսօր մեծ թվով հոգևոր սպասավորներ իրենց ծառայությունն են կատարում հայոց բանակում այն գիտակցությամբ, որ բանակը զորեղ է և հաղթական, եթե իր հոգում կրում է Աստծուն և իր ընթացքն առաջնորդում է Աստծով: Ահա թե ինչու այսօր նաև հայոց բանակի Հոգևոր առաջնորդության մարտական դրոշի վրա մենք կարդում ենք հետևյալ արտահայտությունը՝ «Մեր ուղին օրհնյալ է, որովհետև Աստված մեզ հետ է»: Այսպես դարեր շարունակ ապրել է մեր ժողովուրդը, Աստծով կերտել իր բոլոր հաղթանակները, Աստծով հաղթահարել բոլոր փորձությունները: Մեր նախնյաց օրինակով հայ զինվորի կողքին այսօր ծառայում են նաև Հայ Եկեղեցու սպասավորներ՝ Ավետարանի պատգամներով՝ որպես անխոցելի զրահաշապիկ, զգեստավորելով մեր զավակներին: Նրանք կոչված են հայ զինվորի ոգին, Հայրենիքի և Եկեղեցու հանդեպ նրա սերը զորացնելու, քրիստոնեական արժեքներին հաղորդ դարձնելու կարևոր ծառայության: Մեր հորդորն է, որ բանակի հոգևոր սպասավորներն օրինակելի լինեն զինծառայողների համար, հավատի ոգին զորացնելու խորն ապրում փոխանցեն նրանց և անսակարկ ու աննվազ նվիրումով հովվական աշխատանք իրականացնեն այն վստահությամբ, որ բանակը հայոց պետության և ժողովրդի գոյության երաշխիքն է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ



Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սեյրան Օհանյան

Շատերին թվում է, թե մեր հավատը քարոզում է խեղճություն և հնազանդություն միայն, սակայն պատմությունը մեզ ավանդել է, թե Ղևոնդ Երեցի, Եղիշեի, Եսայի Հասան Ջալալյան կաթողիկոսի կամ Խրիմյան Հայրիկի նման հոգևորականներն ինչպես են պայքարել հայրենի երկրի ազատության համար: Ես համոզված եմ, որ ճշմարիտ քրիստոնյան իր երկիրը պաշտպանելու համար ձգանը պետք է պատրաստ պահի, իսկ այն սեղմելիս խղճով հանգիստ լինի ու հոգով խաղաղ:

Հոգևորականները այսօր բավականին աջակից են հրամանատարներին փոխադարձ հանդուրժողական մթնոլորտի, փոխադարձ վստահության մթնոլորտի ձևավորման մեջ, ընկերական աջակցության, ընկերական սիրո ձևավորման մեջ, որը որ առանց հոգևոր ծառայության մեզ համար չափազանց դժվար կլիներ իրականացնել:

ԵԿԵՂԵՑԻ-ԲԱՆԱԿ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՔՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ
(համառոտ ակնարկ)



Ս. Տրդատ թագավորի և ամբողջ արքունիքի մկրտությունը
Ս. Գրիգոր Լուսավորիչի ձեռամբ



Տ. Մկրտիչ Ա Վանեցի Խրիմյան
կաթողիկոս
(1892-1907թթ.)

Չնայած այն փաստին, որ արդի աշխարհում ռազմական ուժի հզորությունը սերտորեն պայմանավորված է գերժամանակակից ու կատարելագործված զինտեխնիկայով ու սպառազինությամբ հագեցվածությամբ, այդուհանդերձ մարդկային գործոնը՝ հոգևոր, հոգեբանական ու բարոյական դրսևորումներով, չի կորցրել իր առանցքային նշանակությունը: Եվ դա է այն հիմնական պատճառներից մեկը, որ այսօր էլ աշխարհի քրիստոնյա շատ երկրներում գործում է բանակային հոգևորականների՝ կապելանների ինստիտուտը: Անգամ ոչ քրիստոնյա որոշ պետությունների բանակներում տարածուն գործունեություն են ծավալում տվյալ երկրի պաշտոնական կրոնի գործիչները (մասնավորապես Իսրայելի բանակում կրոնավորների դերակատարությունն ամենաբարձր մակարդակի է): Բացառություն չէ նաև հայկական բանակը, որտեղ 1997-ից պետականորեն հաստատված ծրագրով հոգևոր սպասավորություն են իրականացնում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևորականները:

Հայ Եկեղեցին պատմության դարձդարձիկ ընթացքին միշտ էլ կանգնած է եղել հայրենիքի պաշտպանությանը զինվորագրված հայորդիների կողքին, խոսքով ու գործով ոգեշնչել և ցուցաբերել հոգևոր ու նյութական աջակցություն, պետականության կորստի պայմաններում ստանձնել առաջնորդի դեր և հաճախ գլխավորել ազգային-ազատագրական պայքարը: Հայ Եկեղեցու հայրապետներն ու հոգևորականները վճռական ճակատամարտերից առաջ օրհնել են հայոց զորքերին, հաճախ ներկա գտնվել, մինչև իսկ մասնակցել մարտական գործողություններին, հայ ժողովրդին տարատեսակ օտարների լծից ազատագրելու դիվանագիտական ու զինյալ պայքար մղել (բավական է թերևս հիշել Ներսես Մեծ Պարթև, Հովսեփ Հողոցմեցի, Հովհան Մանդակունի, Հակոբ



Սորբ Գևորգ Զորավար



Սուրբ Վարդան Մամիկոնյան



Տ. Ներսես Ե Աշտարակեցի
կաթողիկոս
(1843-1857թթ)

Զուղայեցի, Եսայի Հասան-Զալալյան, Ներսես Աշտարակեցի, Գարեգին Հովսեփյանց կաթողիկոսների անունները):

Երբ 301թ. Հայաստանում քրիստոնեությունը հռչակվում է պետական կրոն, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին սկսում է գործել ազգի բոլոր խավերի շրջանում՝ ստանձնելով իր անդամների հոգևոր կարիքները հոգալու և Ավետարանի արժեհամակարգով կրթելու վեհ առաքելությունը: Պատմական հանգամանքների բերումով՝ Հայ Եկեղեցին իր հիմնադրման առաջին իսկ օրերից առ այսօր նաև հայրենիքի, հայ ազգի պաշտպանության հոգևոր հիմքն է եղել, առանձնահատուկ ուշադրություն ու հոգածություն ցուցաբերել հայոց բանակի հոգևոր դաստիարակության, հոգևոր կարիքների ու պահանջների բավարարման առումով:

Հայ հոգևորականը, մի ձեռքում ունենալով Քրիստոսի հաղթական Սուրբ Խաչը, մյուսում՝ սուրը, միշտ եղել է հայ զինվորի և զորականի կողքին. դրա մասին լավագույնս վկայում է մեր պատմությունը, որն էլ դարձել է մերօրյա ՀՀ զինված ուժերում Հայոց բանակի Հոգևոր առաջնորդության ստեղծման հիմքը:

«Վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» մեծ պատերազմը Վարդանանց ապստամբությունն էր, որի վճռորոշ ճակատամարտը տեղի ունեցավ 451թ. մայիսի 26-ին Ավարայրի դաշտում: Ամենայն հայոց կաթողիկոս Ս. Հովսեփ Հողոցմեցին (440-452թթ.) և Ս. Ղևոնդ Երեցն սպարապետ Ս. Վարդան Մամիկոնյանի ու մյուս զորահրամանատարների հետ առաջնորդում էին հայոց բանակն ու աշխարհազորայիններին: Յուրաքանչյուր զորագունդ իր երեցներն ու քահանաներն ուներ: Ուշագրավ է այն միտքը, որ ճակատամարտի նախօրեին հայոց զորքին ուղղված իր ոգեշնչող խոսքում արտահայտում է առայսօր ռազմիկ հոգևորականի կերպարը խորհրդանշող Ղևոնդ Երեցը. «Դուք բոլորդ գիտեք, որ առաջվա ժամանակներում, երբ պատերազմ էիք գնում, թեպետև սովորություն ունեիք քահանաներին միշտ բանակում պահել, բայց ճակատամարտի ժամանակ, ձեզ հանձնելով նրանց աղոթքին, որևէ ամուր տեղում էիք թողում նրանց. իսկ այսօր եպիսկոպոսները, երեցներն ու սարկավագները, սաղմոսերգուներն ու գրակարդացները, ամեն մեկը



Սուրբ Վարդանանք

սահմանված կանոնով սպառազինված և պատերազմ պատրաստված, կամենում են ձեզ հետ միասին հարձակվել ու ջարդել ճշմարտության թշնամիներին»: Մայիսի 26-ի վաղ առավոտյան ճակատամարտից առաջ կրկին պաշտամունքի աղոթքներ են կատարվում, Ս. Պատարագ է մատուցվում և ամբողջ բանակը հաղորդվում է, իսկ երախայության շրջանում եղող բոլոր ռազմիկները մկրտվում են:

1826-1828թթ. ռուս-պարսկական երկրորդ պատերազմում անուրանալի է Ներսես եպիսկոպոս Շահազիզյանի (1771-1857թթ.: 1843-ից Ամենայն հայոց կաթողիկոս՝ Ներսես Ե Աշտարակեցի անվամբ) ունեցած դերակատարությունը: 1826թ. հուլիսի 29-ին հրապարակած իր շրջաբերականով սրբազանը հայրենակիցներին պայքարի կոչ է անում: Չգոհանալով խոսքերով ու խրատներով՝ Ներսես եպիսկոպոսը ողջ պատերազմի ընթացքում ստանձնում է նաև հայ կամավորական ջոկատների հրամանատարությունը:

1918թ. մայիսյան հերոսամարտերին հայ հոգևորականությունն ամենաանմիջական մասնակցությամբ հաղթանակների կերտման հսկայական ավանդ է ներդնում: Գևորգ Ե Սուրենյանց (1847-1930թթ.) կաթողիկոսի տնօրինությամբ Հայ Եկեղեցին ոչ միայն նյութական վիթխարի աջակցություն է ցուցաբերում նորակազմ հայոց բանակին, այլև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանները, անգամ բարձրաստիճան հոգևորականներ (Գարեգին, Զավեն, Մեսրոպ, Մատթեոս եպիսկոպոսներ, Կորյուն, Խորեն, Արսեն, Գյուտ, Արիստակես վարդապետներ և ուրիշ շատեր) կամավոր մեկնում են ռազմաճակատ՝ ոգևորելու հայ մարտիկներին, և նրանց հետ կողք-կողքի մասնակցում Սարդարապատի ու մյուս ճակատամարտերին:



Գևորգ Ե Սուրենյանց
կաթողիկոս
(1847-1930թթ.)



Գարեգին Հովսեփյանց Մեծի
Տանն Կիլիկիո կաթողիկոս
(1943-1952թթ.)



Գևորգ Ջ Չորեքչյան
կաթողիկոս
(1945-1954թթ.)



«Սասունցի Դավիթ»
տանկային շարասյունը

Հայրենական մեծ պատերազմի հենց սկզբից Հայ Եկեղեցին լծվում է հայրենիքի պաշտպանության գործին: 1941թ. հուլիսի 30-ին էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդը ժողովրդին ուղղված իր երկրորդ կոչում նշում է. «Հայը բացի Խորհրդային Հայաստանից՝ չունի այլ հայրենիք: Հայը Հայաստանից դուրս չունի այլ հաստատուն կռվան, բացի Հայ Եկեղեցին և նրան գլխավոր Ամենայն Հայոց Հայրապետությունը՝ Ս. էջմիածնի հայրապետական Աթոռով... Աջակցել Խորհրդային Միությանը նշանակում է աջակցել հայրենիքին: Խորհրդային Միության հաղթանակը հաղթանակն է նաև հայ ժողովրդի...»:

Մայր Աթոռի կոչերը հզոր արձագանք են գտնում, ինչին հաջորդում է սփյուռքահայության նյութական ու բարոյական օժանդակությունը: Ապավինելով այդ աջակցությանը՝ Հայ Եկեղեցին, ազգընտիր տեղապահ Գերաշնորհ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի (Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1945-1954թթ.) գլխավորությամբ, արդեն 1943թ, խորհրդային բանակին զորակցելու նպատակով, կազմավորում է «Սասունցի Դավիթ» խորհրդանշական անվանումով տանկային շարասյունը:

ՄԵՐ ՕՐԵՐՈՒՄ

Նորագույն շրջանի հայկական զինուժը, ծնունդ առնելով Արցախյան գոյամարտում և կամավորական ջոկատներից վերաճելով կանոնավոր բանակի, փառահեղ հաղթանակներ է տարել և արժանիորեն վաստակել փորձագետների կողմից քանիցս հնչած «տարածաշրջանի ամենամարտունակ բանակ» գնահատականը: Պատերազմից հետո էլ բանակաշինության ընթացքը չի դադարել, մեծ թափով աշխատանքներ են տարվել մարտունակության ու կարգապահության բարձրացման, բարոյահոգե-



Սուրբ Սարգիս Զորավար



Տ. Վրթանես վրդ. Աբրահամյանը և սպարապետ Վազգեն Սարգսյանը



Վեհափառ Հայրապետը պաշտպանության նախարարի և ՀՀ ԶՈւ հոգևոր առաջնորդի հետ



ՀՀ ազգային հերոս Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն Հայոց (1955-1994թթ.)

բանական վիճակի կայունացման համար: Այստեղ էլ մեծ անելիք ուներ և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին: Այդ իրողության քաջ գիտակցությամբ 1997թ. լուսահոգի Գարեգին Ա կաթողիկոսի և ՀՀ պաշտպանության նախարար երջանկահիշատակ Վազգեն Սարգսյանի համատեղ նախաձեռնությամբ հիմնվել է ՀՀ ԶՈՒ հոգևոր ծառայությունը: ԶՈՒ հոգևոր սպասավորների գործունեությունը կանոնակարգելու ու վերահսկելու նպատակով նշանակվել են ծառայության պատասխանատուներ: Հայ Եկեղեցու բանակային հոգևոր ծառայության առաջին պատասխանատուն էր Տ. Վրթանես վարդապետ Աբրահամյանը: 1999թ. դեկտեմբերին ծառայության պատասխանատու է նշանակվել Տ. Արշեն աբեղա Սանոսյանը, այնուհետև Տ. Նորայր աբեղա Սիմոնյանը: 2007թ. հոկտեմբերից ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդ է նշանակվել առաջին պատասխանատուն՝ Գերաշնորհ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը:

Հայաստանի անկախ Հանրապետության՝ բանակային հոգևոր ծառայությունն օրենքով ձևակերպելու փորձերին հետևում է նույն նպատակով 1997թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև ստորագրված համաձայնության հուշագիրը, որում ուրվագծվում ու համաձայնեցվում էին բանակի հոգևոր սպասավորների գործունեության ոլորտը, սպասավորության կառուցվածքը, խնդիրներն ու նպատակները:



Երջանկահիշատակ Գարեգին Ա կաթողիկոսն օրհնում է ՀՀ ԶՈւ նորանշանակ առաջնորդ Տ. Վրթանես վրդ. Աբրահամյանին



Զինվորները մոտենում են հաղորդության սուրբ խորհրդին



Զորամասի եկեղեցու խաչն օծելիս

Սակայն ո՛չ առկա պատմական վավերագրերը, ո՛չ էլ արտերկրի փորձը բավարար չէին, և երկու տարվա աշխատանքներից հետո կազմվում է Հոգևոր ծառայության կանոնադրություն, որով առավել հստակեցվում ու կանոնակարգվում է բանակում հոգևորականի գործունեությունը, խնդիրներն ու նպատակները: Կանոնադրությունը 2000թ. սեպտեմբերի 14-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ստորագրում ու հաստատում են Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը և ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը՝ ԱՊՀ երկրներում իր տեսակի մեջ առաջին պաշտոնական վավերաթուղթը: Հավելենք, որ հոգևորականի ներկայությունը բանակում վավերացվել է նաև 2007թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքով:

Համաձայն կանոնադրության՝ հոգևոր ծառայության ղեկավարումն իրականացնում է Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնագրով և ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով նշանակված հոգևոր առաջնորդը: Հոգևոր սպասավորները նշանակվում են ԶՈՒ հոգևոր առաջնորդի ներկայացմամբ, Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնագրով և ՀՀ ՊՆ ԱՀՏԱ գծով տեղակալի հրամանով: Բանակային կորպուսներում ու զորամասերում հոգևոր սպասավորները գործում են համաձայն հոգևոր առաջնորդի ու ՀՀ պաշտպանության նախարարի համատեղ հաստատած ծրագրերի:



ՀՀ ԶՈւ հոգևոր առաջնորդը Աշոտ Երկաթի խաչով օրհնում է դիրքապահ զինվորներին



Սուրբ Տրդատ Գ Մեծ հայոց թագավոր

Հոգևոր ծառայության նպատակներն ու խնդիրներն են. ՁՈՒ անձնակազմին հաղորդակից դարձնել Քրիստոսի Ավետարանին ու քրիստոնեական հավատի սկզբունքներին, դաստիարակել քրիստոնեական-բարոյական սկզբունքներով և ազգային-հայրենասիրական ոգով, ուսուցանել կրոնական, եկեղեցագիտական, ծիսական գիտելիքներ, պայքարել աղանդավորական և այլ վնասակար ուսմունքների դեմ:

Հոգևոր սպասավորներն իրենց առաքելությունն են իրականացնում ռազմաուսումնական հաստատություններում,



Զինվորների մկրտություն



Զորավարժարանի վրան-մատուռում

ՀՀ և Արցախի բանակային կորպուսներում, դիվիզիաներում ու զորամասերում, որտեղ նրանք քարոզ-դասախոսություններ են կարդում, անհատական զրույցներ անցկացնում զինծառայողների համար, յուրաքանչյուր դիրքափոխից առաջ դիրքապահ զինվորներին խրախուսում իրենց խոսքով և աղոթքով ճանապարհում, նաև այցելում սահմանապահ ուղեկալներ, կատարում հոգևոր արարողություններ, կազմակերպում ուխտագնացություններ՝ զինվորներին առաջնորդելով մոտակա եկեղեցիներն ու սրբավայրերը, ինչպես նաև հանդիսություններ և հոգևոր, հայրենասիրական, ուսուցողական կամ գիտական բնույթի ֆիլմերի դիտումներ, այցելում բուժկետեր, հոսպիտալներ ու պատժախցեր, տարածում կրոնական ու հայրենասիրական բնույթի գրականություն, կազմակերպում Եկեղեցու սրբազան խորհուրդներին զինծառայողների մասնակցությունը, կատարում ժամերգություններ ու եկեղեցական արարողություններ: Հայ

զինվորները հոգևոր զարթոնք են ապրում և առավել հաղորդակցվում Մայր Եկեղեցու վարդապետությանը:

Վեհափառ հայրապետի օրհնությամբ 2010թ. Հայաստանի Աստվածաշնչային ընկերությունը հատուկ զինծառայողների համար



Սպաների օրհնություն



Նոր Կտակարանների բաշխում



Նորաօծ Սուրբ Գևորգ եկեղեցին



Զինվորների ուխտագնացություն Հոռեկավանք

հրատարակել է Նոր Կտակարաններ (ներառյալ Սաղմոսաց գիրքը): ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդի ձեռամբ դրանք բաշխվել են ՀՀ և Արցախի մարտական հերթապահություն իրականացնող զորամասերի զինծառայողներին: Զորամասերի գրադարանները համալրվել են հոգևոր գրականությամբ, Աստվածաշնչի օրինակներով, «էջմիածին» ամսագրով ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթով, հոգևոր բնույթի գրքույկներով ու աղոթագրքերով:

Որոշ զորամասերում մատուռներ են կառուցվել: Հաստատվել է զորամասերում կառուցվելիք եկեղեցու նախագիծ, և մոտ ապագայում գրեթե բոլոր զորամասերը կունենան իրենց եկեղեցիները, որոնք հոգևոր

սպասավորներին կօգնեն, իբրև սրբազան առաքելություն, ավելի նպաստավոր պայմաններում կազմակերպելու Սուրբ Պատարագը, ժամերգությունները, տարբեր ծիսական արարողություններ, իսկ յուրաքանչյուր զինվոր հնարավորություն կունենա իր սրտի գոհունակ աղոթքն առ Աստված բարձրացնելու:



Ջրօրհնեքի Սուրբ Խաչը մարտական դիրքերում



ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը Ջրօրհեքի արարողության



Ջրօրհնեքի Սուրբ Խաչը սահմանամերձ զորամասում

2010թ. հունվարի 6-ի Սուրբ Ծննդյան բերկրաշատ տոնին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Վեհափառ Հայրապետի ձեռամբ մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ, որի ավարտին կատարվեց Ջրօրհնյաց արարողություն: Խաչքավորության պատիվն ստանձնել էր ՀՀ պաշտպանության նախարար տիար Սեյրան Օհանյանը: Նախարարի առաջարկությամբ ու Վեհափառ Հայրապետի օրհնությամբ՝ Ջրօրհնյաց Սուրբ խաչը շրջեց մեր երկրի եզերքով, ու դրանով օրհնվեցին մեր սահմանները, ՀՀ ՋՈՒ հոգևոր առաջնորդ Գերաշնորհ Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի ձեռամբ այդ խաչով Ջրօրհնյաց արարողություններ կատարվեցին:



Հոգևոր առաջնորդն Աֆղանստանում



ՀՀ ՊՆ հոգևոր
առաջնորդության դրոշը

Աննախադեպ իրողություն էր մեր խաղաղապահների կողմից Աֆղանստանում Ս. Վարդան անունով եկեղեցու կառուցումը, որի օծման արարողությունը 2010թ. կատարվեց առաջնորդ Սրբազանի ձեռամբ: Այդ եկեղեցին ծառայում է ոչ միայն հայերին. Սրբազանի արտոնությամբ այլ կապելաններ ևս կարող են իրենց արարողությունները կատարել այդ աղոթատանը : ՀՀ զինված ուժերը խաղաղապահ այդ մեծ ընտանիքի կազմում կարողանում են ժառանգած քրիստոնեական արժեքները փոխանցել այլոց:



Հոգևորականների մասնակցությունը զինվորական շքերթին

2011թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի անկախության 20-ամյա հոբելյանի առիթով ՀՀ զինված ուժերի հոգևոր սպասավորներն ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանները, իբրև առանձին շարասյուն, մասնակցեցին զինվորական շքերթին: Նրանք զգեստավորված էին զինվորական դաշտային համազգեստի կտորից կարված եկեղեցական համապատասխան տարազով, որը խորհրդանշում է եկեղեցի-բանակ ջերմ կապը: Հոգևորականների՝ զինվորական շքերթին, իբրև առանձին միավոր, մասնակցությունն աննախադեպ երևույթ էր ոչ միայն հայոց բանակի, այլև ամբողջ աշխարհի պատմության ընթացքում, և համապատասխան արձագանք ունեցավ:

Հոգևորականները շքերթին մասնակցում էին ՀՀ ԶՈՒ Հոգևոր առաջնորդության մարտական դրոշով՝ ստեղծված ԶՈՒ Հոգևոր առաջնորդության 15-ամյակին ընդառաջ: Այն ամբողջովին ձեռագործ է ու ասեղնագործ: Դրոշի մի երեսին ԶՈՒ զինանշանն է՝ *Օրհնյալ է մեր ուղին, զի Աստված ընդ մեզ է,* մյուսին՝ ծաղկյալ Տերունական խաչը՝ *Զինված ուժերի Հոգևոր առաջնորդություն* մակագրություններով: Դրոշի գագաթին Տերունական խաչն է:

Ամեն տարի հունվարի 28-ին, ՀՀ պաշտպանության նախարարի գլխավորությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հավաքվում է ողջ բարձրագույն սպայակազմը: ԶՈՒ հոգևոր առաջնորդի ձեռամբ մատուցվում է Ս. Պատարագ, բաշխվում Ս. Հաղորդություն, հատուկ աղոթքով օրհնվում է բանակը: Արդեն մի քանի տարի է, առաջնորդ Սրբազան հոր միջնորդությամբ, Պատարագի ավարտին տեղի ունեցող ընդունելության ժամանակ Ամենայն Հայոց Հայրապետը քրիստոնեական արժեքներին հավատարիմ ամենաարժանավոր սպաներին արժանացնում է Հայ Եկեղեցու բարձրագույն պարգևներին:



Հայոց բանակի պահապան խաչը

2012թ. հունվարի 29-ին Հայոց հաղթական բանակի կազմավորման 20-ամյակի առիթով Ն.Ս.Օ. Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի սրբատառ կոնդակով Աշոտ Բ Երկաթ Բագրատունի (914-928թթ.) թագավորի խաչը հայտարարվել է հայոց բանակի պահապան ու հովանավոր սրբություն: Աշոտ Երկաթ արքան այս խաչի հովանավոր առաջնորդությամբ մի շարք հաղթանակներ է տարել արաբների դեմ:



Աշոտ Բ Երկաթ Բագրատունի

Հրաշագործ Խաչի կրկնօրինակը, որի կենտրոնում, ապակու տակ զետեղված է Քրիստոսի փրկչական Խաչափայտի մի մասունք, օծվել ու

հանձնվել է ՀՀ ՋՈՒ հոգևոր առաջնորդությանը: Առաջնորդ Սրբազան հոր ձեռքով մասունքակիր Խաչը շրջել է ՀՀ և Արցախի մարտական դիրքերում՝ կենարար նշանով օրհնելով մեր երկրի սահմանները և գոտեպնդելով հայրենյաց սահմանների պաշտպան զինվորյալ հայորդիներին: Իսկ արդեն մայիսի 9-ին հայոց բանակի պահապան Խաչն Արցախում էր. մայիսյան եռատոնի առիթով Ստեփանակերտում կազմակերպված զորահանդեսին այն ծիսական հանդիսավորությամբ անցնում էր զորքերի առջևով:



Հայոց բանակի պահապան խաչը 2012թ. մայիսի 9-ին Ստեփանակերտում տեղի ունեցած զորահանդեսի ժամանակ



Վեհափառ Հայրապետը պարգևատրում է քրիստոնեական արժեքներին հավատարիմ ամենաարժանավոր սպաներին

Բանակի հոգևոր սպասավորությունն սկզբնապես ստեղծվել է հայոց բանակի սահմանապահ զորքերի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բանակի համար: Իր 15-ամյա գոյության ընթացքում ՀՀ ՋՈՒ հոգևոր առաջնորդությունը նշանակալի ուղի է անցել՝ փորձառությանը զուգընթաց մեծացնելով գործունեության արդյունավետությունը: 1998թ. բանակին սպասավորելու են կոչվել 8 հոգևորականներ: Այսօր հոգևոր սպասավորների թիվը 50 է՝ աբեղա, քահանա ու սարկավագ: Չնայած հոգևոր սպասավորության շրջանը պայմանականորեն երկու տարի է, շատ հոգևորականներ կամովին երկարաձգում են իրենց ծառայության ժամկետը;



Զինվորական շքերթին մասնակցած հոգևորականների ուխտագնացության ընթացքում

Մեր բանակն իր պատմության ընթացքում չի ունեցել պաշտոնական հոգևոր սպասավոր, չնայած որ հայ հոգևորականը միշտ եղել է հայրենիքի պաշտպանության գործին նվիրյալների շարքում՝ հատկապես պատերազմների ժամանակ: Հայ ժողովրդի պատմության դառը դասերը վկայում են, որ մեր ժողովրդի լավագույն դաշնակիցը հայոց բանակն է: Նույն այդ պատմությունը փաստում է նաև, որՀայ Առաքելական Սուրբ Եկեղեցին մեր բանակի հոգու ծննդավայրն է: Եկեղեցին ու բանակը մեր իրականության երկու կայացած կառույցներ են՝ տարբեր, բայց նաև իրար նման: Այս երկու կառույցների սերտ համագործակցությունը հայ ժողովրդի ֆիզիկական ու հոգևոր անվտանգության հուսալի երաշխիքն է և ապահովում է մեր երկրի ընթացքը դեպի ապագան աշխարհի ժողովուրդների երթում:



Հոգեվոր սպասավորները պարգևատրվել են «ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ 20 ՏԱՐԻ» հոբելյանական մեդալով



Բանակի հոգևոր սպասավորները Վեհափառ Հայրապետի հետ հանդիպմանը

